



18.	Դատախազության աշխատողներ եւ դատարանների աշխատակազմերի մասնագետներ	4
19.	Լրագրողներ	4
20.	Չայինկասացիայի աշխատողներ	4
21.	Չայաստանի Չանրապետության կենտրոնական բանկի եւ բանկային համակարգի աշխատողներ	4
22.	Ուղեկցորդներ երկաթուղու վագոնի, օդանավերի եւ նավերի բորտուղեկցորդներ	4
23.	Վագոնավարներ հասարակական տրանսպորտի	4
24.	Բանվորներ եւ բեռնատար մեքենաների վարորդներ՝ զբաղված լեռնային, լեռնահիմնական, շինմոնտաժային եւ շիննորոգման աշխատանքներում	12
25.	Լեռնագործներ, բեռնատար մեքենաների վարորդներ եւ բանվորներ այլ մասնագիտությունների, ստորգետնյա եւ բաց եղանակներով օգտակար հանածոների արդյունահանման, պայթեցնողներ, քարտաշներ, քար մշակողներ եւ հարակից մասնագետներ	12
26.	Շինարար-տեղակայորդներ եւ հարակից մասնագետներ	7
27.	Բանվոր-հարդարողներ՝ զբաղված շինարարական եւ շիննորոգման աշխատանքներում եւ հարակից մասնագետներ	7
28.	Ներկարարներ, բանվորներ շենքերի եւ շինությունների մակերեսային մաքրման եւ հարակից մասնագետներ	7
29.	Բանվորներ եւ բեռնատար մեքենաների վարորդներ՝ զբաղված հանքահորերի (հանքերի), բացահանքերի (կտրվածքների), մետրոպոլիտենների, թունելների եւ հատուկ նշանակություն ունեցող ստորգետնյա կառույցների շինարարությունում	12
30.	Բանվորներ մետաղամշակման եւ մեքենաշինական արդյունաբերության	7
31.	Կաղապարողներ, եռակցողներ, դարբիններ, գրտնակիչներ, կառուցվածքային (կոնստրուկցիոն) մետաղի նախապատրաստողներ եւ հարակից նախապատրաստողներ, հարակից մասնագետներ	7
32.	Գործիքագործ-փականագործներ, հաստոցավարներ, կարգաբերողներ, բանվորներ եւ հարակից մասնագետներ	7
33.	Բանվորներ՝ զբաղված արծնապատմամբ, մետաղապատմամբ եւ ներկմամբ	7
34.	Բանվորներ՝ զբաղված հղկանյութերի, սինթետիկ ավմաստների, գերկարծր նյութերի եւ դրանցից պատրաստվող արտադրատեսակների եւ բնական ավմաստների արտադրությունում	12
35.	Բանվորներ գրահրատարակչական արտադրության	4
36.	Եռակցողներ, էլեկտրագազաեռակցողներ, գազակտրողներ եւ հարակից մասնագետներ	7
37.	Վերամբարձ կռունկների մեքենավարներ (կռունկավար) եւ հարակից մասնագետներ	7
38.	Չավաքորդ-փականագործներ էլեկտրական, էլեկտրամեխանիկական եւ ռադիոէլեկտրական սարքերի եւ հարակից մասնագետներ	7
39.	Օպերատորներ, ապարատավարներ եւ մեքենավարներ քիմիական նյութերի արտադրության սարքավորանքի, նորոգող փականագործներ եւ էլեկտրափականագործներ կայանքների, կաթսայական, տուրբինային եւ շոգետուրբինային սարքավորումների, պոմպակայանի, էներգաբլոկի, էլեկտրակայանների եւ ցանցերի, ռադարային համալիրի, մայրուղային ռադիոլոկացիոն համակարգի եւ հարակից մասնագետներ	7
40.	Օդային գծերում վերնային աշխատանքներով զբաղված վերանորոգող եւ էլեկտրացանցերում մալուխների նորոգման ու մալուխային գծերի վրա կապարային կցորդիչներ տեղադրող էլեկտրամոնտյոր-փականագործներ	6
41.	Չիմնային եւ թթվային մարտկոցներ լիցքավորող ու սպասարկող աշխատողներ	6
42.	Ծովի մակերեսային 2000 մետրից ավելի բարձրության վրա աշխատանքներ կատարող ճարտարագիտական-տեխնիկական աշխատողներ	6

**Հայկական ատոմային էլեկտրակայանի աշխատողներ**

1.	Համաձայն ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 11-ի "Առողջության համար վնասակար աշխատանքների եւ մասնագիտությունների ու առողջության համար առանձնապես ծանր աշխատանքների եւ մասնագիտությունների ցանկերը հաստատելու մասին" N 1907-Ն որոշման N 1 հավելվածի ցանկի II բաժնում նշված աշխատողներ	7
2.	Համաձայն ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 11-ի "Առողջության համար վնասակար աշխատանքների եւ մասնագիտությունների ու առողջության համար առանձնապես ծանր աշխատանքների եւ մասնագիտությունների ցանկերը հաստատելու մասին" N 1907-Ն որոշման N 2 հավելվածի ցանկի IV բաժնում նշված աշխատողներ	12

Հավելված N 2  
ՀՀ կառավարության  
2005 թվականի օգոստոսի 11-ի  
N 1384-Ն որոշման

**Ի Յ ճ.**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱԿԱՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐԺԱԿՈՒՐՈՂԻ ԿՐԱՍՏԻՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ**

1. Սույն կարգով սահմանվում է ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների արձակուրդի տրամադրման կարգը:
2. Ամենամյա լրացուցիչ արձակուրդը տրամադրվում է յուրաքանչյուր աշխատանքային տարվա համար՝ տվյալ տարում:
3. Ամենամյա լրացուցիչ արձակուրդը, կողմերի համաձայնությամբ, կարող է միացվել ամենամյա նվազագույն արձակուրդին կամ տրամադրվել առանձին:
4. Աշխատանքի առաջին տարվա համար ամենամյա լրացուցիչ արձակուրդը տրամադրվում է տվյալ կազմակերպությունում անընդմեջ աշխատանքի 6 ամիսը լրանալուց հետո: Երկրորդ եւ յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային տարվա համար ամենամյա լրացուցիչ արձակուրդը տրամադրվում է աշխատանքային տարվա ցանկացած ժամանակ՝ ամենամյա արձակուրդի տրամադրման հերթականությանը համապատասխան: Հերթականության կարգը սահմանվում է կոլեկտիվ պայմանագրով, իսկ նման պայմանագրի բացակայության դեպքում՝ կողմերի համաձայնությամբ:
5. Մինչեւ տվյալ կազմակերպությունում անընդմեջ աշխատանքի 6 ամիսը լրանալը աշխատողի խնդրանքով ամենամյա լրացուցիչ արձակուրդ տրամադրվում է՝
  - ա) կանանց հղիության ու ծննդաբերության արձակուրդից առաջ կամ հետո.
  - բ) կոլեկտիվ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:
6. Տվյալ կազմակերպությունում անընդմեջ աշխատանքի 6 ամիսը լրանալուց հետո ամենամյա լրացուցիչ արձակուրդի ժամանակի ընտրության իրավունք ունեն՝
  - ա) մինչեւ 18 տարեկան աշխատողները.
  - բ) հղի կանայք եւ մինչեւ 14 տարեկան երեխա խնամող աշխատողները:
7. Տղամարդկանց ամենամյա լրացուցիչ արձակուրդն իրենց ցանկությամբ տրամադրվում է կնոջ հղիության ու ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածում:
8. Առանց աշխատանքից կտրվելու սովորող աշխատողների ամենամյա լրացուցիչ արձակուրդն իրենց ցանկությամբ տրամադրվում է՝ քննություններին, ստուգարքներին, դիպլոմային աշխատանքներին նախապատրաստման, լաբորատոր աշխատանքների կատարման ժամկետներին համապատասխան:
9. Հիվանդին կամ հաշմանդամին տանը խնամող աշխատողին, ինչպես նաեւ քրոնիկ հիվանդությամբ տառապող այն աշխատողին, որի հիվանդության սրացումը կախված է մթնոլորտային պայմաններից, ամենամյա լրացուցիչ արձակուրդը բժշկական եզրակացության հիման վրա տրամադրվում է նրանց նախընտրած ժամանակ: